

ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Բառագիտություն

Բազմիմաստ բառեր - Փոխաբերություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մարգո Մանուչարյան

Կոտայքի մարզի Քանաքեռավանի միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	2
ԳԼՈՒԽ 1՝ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ.	
ՆՐԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	5
Գլուխ 2.....	6
Գլուխ 3.....	8
Եզրակացություն	15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բառագիտությունը (= հուն. lexikos < lexis «բառ» logos «ուսմունք») լեզվաբանության բավական մեծ, բարդ ու տարողունակ բաժին է, որն ուսումնասիրում է բառը իբրև լեզվի ինքնուրույն միավոր՝ զանազան կողմերով ու դրսևորումներով: Բառագիտությունը այդպիսով, ինչպես անվանումն է ցույց տալիս, գիտություն է բառի մասին, և նրա ուսումնասիրության առարկան այլ բան չէ, քան հենց այն բառը, առանց որի լեզու չկա և չի կարող լինել: Եվ դա ինքնին հասկանալի է: Լեզուն, իբրև մարդկային հաղորդակցման հիմնական միջոց, բառերի՝ բառային կազմի կամ բառապաշարի, և համապատասխան քերականական կառուցվածքի համադրությունը՝ ամբողջությունն է կազմում: Նշանակում է՝ բառերը (բառապաշարն ամբողջությամբ առած) իրո՞ք այն երկու կարևոր ու հիմնական պատվանդաններից մեկն են, որոնց վրա խարսխվում է լեզվի շենքը:

Ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնավոր լեզվաբանությունը ունի իր գիտաձյուղերը: Դրանցից մեկը բառագիտությունն է, որը, իբրև բառին վերաբերող գիտություն, զբաղվում է լեզվի բառային կազմի՝ բառապաշարի, բառերի իմաստների ու դրանց կրած փոփոխությունների, բառերի ու արմատների ծագման, բառերի կազմության ու կառուցվածքի, բառերի իմաստային կայուն կապակցությունների՝ դարձվածքների, և բառարանների կազմանն ու նրանց տեսակների ուսումնասիրությամբ:

Բառագիտությունն այդպիսով լեզվաբանական գիտության բավական մեծ ու տարողունակ բաժին է, որը ներառում է՝ ա) բառապաշարը, բ) իմաստաբանությունը, գ) ստուգաբանությունը, դ) բառակազմությունը, ե) դարձվածաբանությունը, և զ) բառարանագրությունը:

Բառի, իբրև լեզվի ինքնուրույն իմաստային կարևոր միավորի, ուղղակի ուսումնասիրությամբ զբաղվում է բառագիտությունը, այն էլ իհարկե , ոչ միազծորեն , այլ՝ տարբեր կողմերով ու առումներով: Դա էլ, բնականաբար, բավականաչափ «ծանրացնում է » բառագիտության «բեռը», բազմազան դարձնում նրա նպատակային խնդիրները:

Բառագիտությունը ներառում է՝ ա) բառերի իբրև լեզվի ինքնուրույնաբար գործածվող իմաստային հիմնական միավորների, բ) բառերի ամբողջության՝ լեզվի ընդհանուր

բառապաշարի և դրա համակարգի , գ) բառերի արտահայտած իմաստների և իմաստային հարաբերությունների, դ) բառերի ծագման ու նրանց պատմական կյանքի , ե) բառերի կազմության և ձևաբանական կառուցվածքի , զ) բառերի իմաստային կապակցությունների՝ դարձվածքների, և վերջապես նաև՝ է) բառարանների կազմման, նրանց տեսակների, բառագիտական նշանակության և այլ հարցերի ուսումնասիրությունը:

Ըստ այդմ էլ, ինչպես հայտնի է բառագիտությունն ունի իր տարբեր բաժինները:

Բառագիտության բաժիններն են.

ա) Իմաստաբանությունը, որը ուսումնասիրում է բառերի իմաստային համակարգը, նրանց արտահայտած իմաստներն ու կրած իմաստային փոփոխությունները, ձևաիմաստային տեսակները, իմաստային կապերն ու փոխհարաբերությունները:

բ) Ստուգաբանությունը, որը ուսումնասիրում է բառերի ծագումը և նրանց ընդհանուր պատմական կյանքը:

գ) Բառակազմությունը , որը ուսումնասիրում է լեզվի բառակազմական համակարգը, բառերի կառուցվածքային օրենքներն ու օրինաչափությունները:

դ) Դարձվածաբանությունը, որը ուսումնասիրում է բառերի կայուն իմաստային կապակցությունների՝ դարձվածքների համակարգը:

ե) Բառարանագրությունը, որը ոչ միայն զբաղվում է բառարանների կազմմամբ, այլև ուսումնասիրում է նրանց տեսակները, կազմության սկզբունքները, որոշում տարբեր բառարանների արժեքն ու նշանակությունը:

**ԳԼՈՒԽ 1. ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ.
ՆՐԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Իմաստաբանությունը (սեմասիոլոգիա < հուն. semasia «իմաստ, նշանակություն» + logos « հասկացություն, ուսմունք»), ինչպես ասվել է , բառագիտության այն բաժինն է, որը ուսումնասիրում է բառերի իմաստային համակարգը, պարզաբանում բառիմաստի բոլոր իրողությունները, ցույց տալիս բառիմաստային փոփոխություններն ու տեղաշարժերը: Լեզվաբանական գիտության ինչպես ամեն մի ճյուղ, այնպես էլ իմաստաբանությունը լինում է պատմական և նկարագրական: Պատմական իմաստաբանությունը զբաղվում է լեզվի պատմական զարգացման ընթացքում բառերի կրած իմաստային փոփոխությունների ուսումնասիրությամբ, բացահայտում, թե իմաստային ինչ զարգացում են ապրել նրանք վաղ ժամանակներից մինչև մեր օրերը: Իսկ նկարագրական իմաստաբանությունը, ի տարբերություն պատմական իմաստաբանության, լեզվի ոչ թե բոլոր շրջանների, այլ միայն մի շրջանի բառային իմաստային համակարգի ուսումնասիրությամբ է զբաղվում, հիմնականում քննում ու լուսաբանում միայն մի շրջանի բառերի իմաստները, նրանց կրած իմաստային փոփոխությունները:

ԳԼՈՒԽ 2.

Բազմիմաստ են կոչվում մեկից ավելի իմաստ արտահայտող բառերը, օրինակ՝ **ասել, բան, բռնել, գլուխ, գնալ, դնել, երես, թափել, իջնել, լավ, խոսել, խոր, ծանր, հանել, նշան, վատ, վրա, փափուկ, փոքր, քանդել, քաշել, օտար, օր** և այլն:

Լեզուն ինչպես չի սիրում ճիշտ նույն իմաստի համար շատ բառեր, այնպես էլ չի սիրում միևնույն բառը խիստ ճշտորեն կամ բացառապես նույն իմաստով, նույն նշանակությամբ գործածել: Տրամաբանական ու օրինաչափական նման հիմքով պայմանավորված՝ բառերը անվերջ իմաստային հեղաբեկումների՝ մակընթացությունների ու տեղատվությունների են ենթարկվում և հաճախ տարբեր քանակով իմաստներ կամ նշանակություններ արտահայտում:

Ի տարբերություն մենիմաստ բառերի, որոնք եթե, ինչպես ասվել է, հատկանշվում են մենիմաստությամբ, բազմիմաստ բառերը մեկից ավելի (2-ից մինչև նույնիսկ 60) իմաստներ են արտահայտում, կազմելով մի դաշտ, որտեղ և դրանք շղթայակցվում են իրար և ամբողջություն կազմում: Իսկ սա նշանակում է, որ բազմիմաստ բառերի իմաստները սերտորեն կապված են իրար հետ և շղթայակցման մեջ իրենց սկզբնական կամ հիմնական օղակն են ունենում, որին էլ մյուս օղակներն են հաջորդում:

Բազմիմաստ բառերի իմաստային շղթայի մեջ առաջին ու գլխավոր օղակն են կազմում այն իմաստները, որոնցից սերում կամ որոնց հետ զանազան թելերով շաղկապվում են մյուս իմաստները: Բառի այդպիսի՝ հիմնակետային (դոմինանտ) իմաստը կոչվում է հիմնական կամ գլխավոր իմաստ: Բառերը, իբրև կանոն, ունենում են մեկ գլխավոր կամ հիմնական իմաստ, որը, ի դեպ, կարող է նաև ժամանակի ընթացքում մեռնել կամ փոխարինվել այլ իմաստով: Օրինակ՝ **Ըմբռնել** բառը, որ ծագում է **ընդ+բռնել** բաղադրիչներից և նախապես նշանակել է «բռնել, պինդ բռնել, կաշկանդել, ձերբակալել», հետագայում զրկվելով դրանցից՝ ձեռք է բերել «ունակ լինել որևէ բան մտքով ընկալելու, հասկանալ» իմաստը, որը և հիմք է ծառայել իր հերթին մի քանի այլ՝ «գիտակցել», «գլխի ընկնել, կռահել», «պատկերացնել», «զգալ, ընկալել» երկրորդական իմաստների համար:

Բազմիմաստ բառերն իրենց արտահայտած զանազան իմաստներով իմաստաբանական բավական բարդ համակարգ են ներկայացնում: Նրանց ինչպես բուն՝ հիմնական, այնպես էլ երկրորդական իմաստներն ըստ էության արտաքին աշխարհի

բազմատեսակ իրողությունների, երևույթների, դրանց միջև իրապես գոյություն ունեցող կապերի ու հարաբերությունների արտացոլման աստիճանիկներն են և որոշակի ճանաչողական արժեք ունեն:

Բառի գլխավոր ու երկրորդական իմաստները, սերտորեն կապված լինելով իրար հետ, միաժամանակ տարբերվում են իրարից իրենց տեսակարար կշիռով, ծագմամբ, պատմական կյանքով և առհասարակ զարգացման ընթացքով: Բառի հիմնական կամ գլխավոր իմաստը , նախորդելով երկրորդական իմաստին կամ իմաստներին, գալիս է շատ ավելի վաղ ժամանակներից և հաճախ, այս կամ այն չափով , կապված է մնում իր սկզբնական իմաստի՝ բնիմաստի հետ, որ ասենք, մթագնել ու առերես չի գիտակցվում: Բայց սա էլ հենց վկայում է , որ բառի հիմնական կամ գլխավոր իմաստը շատ ավելի կայուն է, քան երկրորդական հիմնական կամ գլխավոր իմաստը կամ իմաստները, որոնք և շարունակ աճում ու մեծապես հարստացնում են նրա իմաստաբանական կազմը:

Բազմիմաստ բառերի իմաստային կառուցվածքը նրանց արտահայտած իմաստների ամբողջությունն է, որի մեջ էլ իրենց համապատասխան տեղն ու կշիռն ունեն ինչպես հիմնական, այնպես էլ երկրորդական իմաստները: Հիմնական իմաստը բառի ելակետային կամ սկզբնական , իսկ երկրորդականը նրա ածանցյալ, նրանից սերած իմաստն է, որ սովորաբար փոխաբերական իմաստ է կոչվում : Իսկ բառը մի այլ կամ փոխաբերական իմաստով գործ է ածվում, երբ՝ ա) առարկաները, երևույթները, իրողությունները ձևով՝ տեսքով ու ներքին բովանդակությամբ նմանեցվում են այլ առարկաների, երևույթների, իրողությունների, բ) երբ համեմատություններ են անց կացվում տարբեր առարկաների, երևույթների ու իրողությունների միջև, և կամ՝ նրանք ներկայացվում են իրենց ոչ ներհատուկ հատկանիշներով:

Այս տեսանկյունից էլ քննելով բառերի փոխաբերական իմաստները , լեզվաբանական, գիտությունը, ինչպես հայտնի է դրանց առաջացման երեք միջոց է նշում.

ա) *փոխաբերություն, բ)փոխանունություն, գ)համընկալում:*

ԳԼՈՒԽ 3

Փոխաբերությունը = ռուս.մետաֆորա < հուն. metaphore «փոխանցում», ինչպես անվանումն է ցույց տալիս, բառի մի այլ իմաստով գործածությունն է: Այն բազմիմաստության ամենագործուն, առավել զարգացող տարատեսակն է և ստեղծվում է, առաջ է գալիս հիմնականում նմանության հիման վրա: Փոխաբերության հիմքը այդպիսով կազմում է նմանությունը, որն էլ իր տարբեր արտահայտություններն ունի:

Փոխաբերության հիմք կարող է լինել ա) առարկաների, երևույթների, իրողությունների արտաքին ձևի տեսքի, դիրքի, նմանությունը, բ) առարկաների, իրողությունների ներքին հատկությունների կամ նրանց գործառույթների նմանությունը, գ) առարկաների, երևույթների, իրողությունների ազդեցությամբ ծագող բարդ զուգորդությունների տպավորությունների նմանությունը և այլն:

Ոսկի բառն, օրինակ, *«դեղնագույն ազնիվ շատ թանկարժեք մետաղ»* նշանակելուց բացի գործածվում է նաև *«թանկարժեք, բարձրարժեք, ընտիր, շատ կարևոր»*, *«ոսկեգույն, ոսկու նման դեղին»*, *արտաքին «վառ, շքեղ»* իմաստներով, որոնց հիմքում էլ ընկած է մի դեպքում արտաքին գույնի (*«Ոսկի, դեղին վառ ծիրանի գույներ հազեք խայտաբղետ»*, ՀԹ, ԵԾ, 1, 418), մի դեպքում ներքին հատկության (*«Կյանքըս դալար ու լալազար, ոսկի օրերս ո՞ր գնացին»*, Ավ.Բս.) մի դեպքում զուգորդության, տպավորության (*«Ցերեկվա ոսկի լույսերը մեռան»*, Ավ. Բս.) նմանությունը:

Այդպես և, ասենք, արծաթ բառը, որ համանման «սպիտակ գույնի պարզ մետաղի» անվանումն է, նրա ձևի (գույնի) նմանությամբ *«արծաթագույն, սպիտակ»* «*հմայված լուսնի շողերով արծաթ... Իմ մեջ սատել է հիվանդ մի կարոտ»*, ՎՏ, ԵԾ, 1, 27), *ձայնի նմանությամբ «արծաթագույն, զրնգուն»*, (*«Ու հրնչում էր էն ծըմակում անուշ ծիծաղն իր արծաթ»*, ՀԹ, ԵԾ 2, 163, *ներքին հատկանիշի նմանությամբ «թանկարժեք, ընտիր, անխառն»* («*Արծաթ խոսքերով աղբյուրն է խոսում*, ՎՏ, ԵԾ, 1, 15) *իմաստներով է գործածվում:*

Մի այլ օրինակ. *Աչք* բազմիմաստ բառը *«տեսողության գործարան»* նշանակելուց բացի, դրա իբրև այդպիսինի, գործառության կամ արտաքին ձևի տեսքի նմանության հիման վրա արտահայտում է նաև մի շարք այլ իմաստներ, ինչպես *«հայացք, նայվածք»* (*«Նա աչքը չէր հեռացնում քեզանից և մեզանից»*), *«ամենալավը, ամենաընտիրը»* (Այս քաղաքը աշխարհի աչքն է», Ավ. Բս.), «կահույքի և նման այլ իրերի բաժանմունք, զգրոց»

(«պահարանի աչք»), « վերքի թարախակալած սպիտակ կետը» («Վերքի աչքը բացվել է ») «բողբոջի պտուկը» («Խնձորենու աչքերը երևում են»):

Ինչպես արտաքին ձևային, այնպես էլ ներքին գործառության հատկանիշների նմանության հիման վրա սուր «Թուր, կտրելու որևէ գործիք» բառը դեռ շատ վաղ շրջանում ճյուղավորվել – վերածվել է երկու առանձին բառային-բառույթային միավորի՝ գոյականի և ածականի, որոնցից յուրաքանչյուրն էլ իր հերթին համանման ճանապարհով այլ նշանակություններ է ձեռք բերել:

Սուր գոյականը իր բուն «սրաբերան սառը զենք, թուր» («Գոտիից քարշ էր ընկած երկսայրի սուրը» Բաֆֆի) իմաստից բացի նշանակում է «բռնի միջոց, ուժ, բռնություն» («Եկավ սուրը ստրկության . . . ելեք ընդդեմ բռնակալի», Դ. Դեմիրճյան) «արյունահեղություն, կոտորած, ջարդ, կռիվ» («Մենք անցել ենք արյան ծովեր, Սուր ենք տեսել ու կրակ», ՀԹ, ԵԺ, 1, 83):

Սուր ածականը իր բուն «շատ սուր բերան ունեցող, հեշտ կտրող, հատու» («Մի սուր դանակ ունեի գրպանումս», ՀԹ, ԵԺ, 3), իմաստից բացի նշանակում է նաև «շատ բարակ ու նուրբ ծայր ունեցող, սրածայր, հեշտ ծակող» (սուր ասեղ), «խայթող, ծակող, կծու, կտրուկ» (սուր լեզու), «ուժեղ, ուժգին, սաստիկ» (սուր ցավեր), «նուրբ, նրբագգաց, զգայուն» (սուր հոտառություն), «շատ լարված, տագնապալից» (սուր վիճակ), «թափանցող, խորաթափանց» (սուր միտք) և այլն:

Ինչպես դժվար չէ նկատել, այդ իմաստներն իրոք առաջ են եկել որոշակի նմանության հիմքի վրա և պատճառաբանվում, արդարացվում են տրամաբանորեն: Այդպես և պարզ է, թե, օրինակ, ինչու **բերան** բառը ոչ միայն մարմնի մաս, այլև **«ուտելու ճաշակելիքի գործարան», «անձ, շունչ», «կտրող գործիքի սայր», «ամանի անոթի վերևի բաց մասը», «անցք, ծակ, մուտք», «ջրի ակունք սկիզբ», «մուտքի տեղը, ժամանակ»** և այլն նշանակություններն է արտահայտում, թե ինչու է **թև** բառը ոչ միայն **«թռչելու գործարան», այլև «մարդու բազուկ, ձեռք, ուսից մինչև դաստակը», «զանազան առարկաների դուրս տարածված շարժիչ կամ շարժման մաս», «ճակատած բանակի կենտրոնից աջ և ձախ տեղավորված գորամաս», «զգեստի այն մասը, որ պատասպարում է թևերը» «շինության մասեր, որ տարածվում են գլխավոր շենքից աջ և ձախ», «հովանավորություն, պաշտպանություն», «թռիչք, սլացում»** և այլն իմաստներն է արտահայտում, թե ինչու **խաղալ** բայը ոչ միայն **«խաղ անել որևէ խաղալով զբաղվել», այլև նշանակում է «տեղից**

շարժվել այս կամ այն ուղղությամբ», «կատակ անել, զվարճանալ», «ծաղրել, ձեռք առնել մեկին, կատակի առարկա դարձնել», «թատրոնում որևէ դեր կատարել», «խայտալ, շողալ» և այլն:

Նմանության հիման վրա փոխաբերական զանազան իմաստներ են արտահայտում հատկապես լեզվում համընդհանուր գործածություն ունեցող, բառային ֆոնդի մաս կազմող բառերը:

Փոխաբերական բազմազան իմաստներով աչքի են ընկնում մանավանդ մարմնի մաս, թռչուն , կենդանի նշանակող, ինչպես նաև սովորական գործողություններ ու եղելություններ, զանազան հատկանիշներ ցույց տվող շատ բառեր, ինչպես ականջ, գլուխ, երես, լեզու, ձեռք, ոտք, քիթ, պոչ, փոր . . . , ագռավ, աղավնի, ծիտ, թութակ . . . , աղվես, գայլ, գառնուկ, շուն, օձ, խոզ . . . , ամեյ, բերել, բռնել, գործել, դնել, թողնել, ծիծաղել, կանգնել, սիրել, տանել, փոխել, քաշել, քանդել . . . , քաջ, սև, կանաչ և այլն:

Գլխի, իբրև մարմնի հիմնական, վերին կամ առջևի մասի ձևի նմանությամբ առաջ են եկել **գլուխ** բառի *«գագաթ, կատար»* (*«Հորիզոնի խորքում շողշողում է Արարատի սպիտակ գլուխը», Ա . Բակունց*), *«առարկայի որևէ ծայրը ծայրամասը»* (*«Վամուրջի գլխին երևնացին ձիավոր ռուսիկանները», Ա . Բակունց*), *«վերին կողմը, պատվավոր տեղը»* (*«Վասակը արտաքնապես անվրդով և լուրջ բազմած էր սեղանի գլխին», Դ . Դեմիրճյան*), *«զնդածև կօնաձև, կոնձեզ»* (*«Պարկի մեջ նետեց . . . երկու բանան, տոմատ, մի քանի գլուխ սոխ», Ալ . Բու.*) . . . , իսկ ներքին բովանդակության գործառութային դերի հաշվառմամբ *«միտք, գիտակցություն»* (*«Նա ձեռքերը եռանդով շփելով, ինչ-որ հաշիվներ է անում, գլխում», Դաֆֆի*), *«մարդ, անձ»* (*«Չէ մեզանում, աստված վկա, մի հասկացող . . . գլուխ չըկա», ՀԹ, ԵԾ, 1, 251*) իմաստները:

Քթի, իբրև դեմքի դուրս ցցված շնչառական գործարանի, ձևի նմանությամբ քիթ բառը գործածվում է նաև «որոշ կենդանիների դունչը», «զանազան գործիքների սուր ծայրը», «զանազան առարկաների սրավուն ծայր» իմաստներով:

Պոչի, իբրև մարմնի վերջնամասի, նմանությամբ պոչ բառը ստացել է «որևէ բանի ծայրը», «որևէ բան բռնելու և վերցնելու տեղը, կոթ», «զգեստի տուտ, փեշ, քղանցք», «պտուղների կոթ», և այլն իմաստները:

Բառերը, ինչպես ասվել է, փոխաբերական իմաստներ են արտահայտում առարկաների, երևույթների, իրողությունների ոչ միայն արտաքին, այլև ներքին

հատկանիշների նմանության հիման վրա: Այդ տեսակետից բնորոշ են, օրինակ, աղվես, գայլ, խոզ, ոչխար, շուն, օձ, աղավնի, արծիվ բառերը, որոնք կենդանի կամ թռչուն նշանակելուց զատ նաև, նրանց հատկությունների համապատասխան, *«խորամանկ նենգադավ մարդ» (1), «գազանաբարո մարդ» (2), «1. գեր, շատ չաղ», «2. Կեղտոտ, փնթի», «3. գորոզ, ոչ բարեհամբույր» (3), «կամազուրկ և թուլամիտ» (4), «1. խորամանկ, »վարպետ հնարամիտ., «2. անատակ, շնացող», «3. անարգ, չարագործ» (5), «նենգ, թունոտ, խարդախ» (6), «քաղցրաբարո, քնքուշ բնավորության տեր» (7.) «ուժեղ, քաջ, սրատես» (8),* իմաստներն են արտահայտում:

Փոխաբերությունը, իբրև բազմիմաստության տեսակ, բազմաբարդ երևույթ է: Բազմաթիվ բառեր կան, որոնք առարկաների, երևույթների ձևի կամ նրանց ինչ-ինչ հատկանիշների նմանության հիման վրա ոչ թե սուկ մեկ, այլ մեկից ավելի փոխաբերական իմաստներ են արտահայտում. Հմմտ., օրինակ, *ոսկի գդալ, բաժակ, մատանի, ժամացույց . . . , ոսկի աշուն, ծամեր, անտառ . . . , ոսկի ժամանակ, տարիներ, երիտասարդություն, երագներ և այլն:*

Ոսկի բառը գործածվում է առաջին դեպքում իր բուն (ոսկուց պատրաստված), իսկ երկրորդ դեպքում շատ թանկ, թանկարժեք (*ոսկին ամենաթանկ մետաղն է*) իմաստով: Բառերի հիմնական իմաստները եթե արտաքին աշխարհի առարկաները, իրողությունները, նրանց այլազան հատկանիշները անմիջականորեն, ապա երկրորդականները դրանք միջնորդաբար են արտահայտում դրսևորելով զանազան կապեր ու հարաբերություններ այլ առարկաների, երևույթների, իրողությունների հետ:

Փոխաբերությունները շատ ավելի բարդ ու բազմազան են հատկապես այն դեպքում, երբ անձի կամ կենդանու վերաբերող հատկանիշները բնության երևույթներին, իսկ բնության կամ այլ երևույթների վերաբերող հատկանիշները անձանց, մարդկանց են վերագրվում, Հմմտ., *օրինակ, բարի մարդ — բարի առավոտ — բարի գործ. չար մարդ — չար տղա — չար քամի — չար ժամանակ (ներ) — չար բերան — չար ծիծաղ. գվարթ աղջիկ — գվարթ երեխա — գվարթ ծիծաղ — գվարթ խոսակցություն. աղջիկը ծպտում է — ընկերս ծպտում է — մարզիկը ծպտում է . . . և արևը ծպտում է — կյանքը ծպտում է — սարեր ու ձորեր ծպտում են. Գայլը ռոնում է — շունը ռոնում է և քամին ռոնում է — հողմը ռոնում է. ծառը ծաղկում է — վարդը ծաղկում է — հացը ծաղկում է — գրականությունը ծաղկում է — սերը ծաղկում է և աղջիկը ծաղկում է — զավակները ծաղկում են — ծաղկես դու և այլն:*

Այդպիսի շատ փոխաբերություններ կան Վ . Տերյանի չափածո ստեղծագործություններում, ինչպես *Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին (ԵԺ, 1, 11), Աստղերն են ժպտում լուսեղեն նագով, Խաղաղ դաշտերը մութն է համբուրում (14), Սարի հետևում շողերը մեռան (15), Լռին խոկում են երկինք, գետ ու արտ (18), Երբ լռում են օրվա աղմուկները զվարթ, երբ շողերն են մեռնում, ծաղիկները — ննջում են (23), Գիշերվա հովն էր լալիս դաշտերում (26), Չողջունեց ինձ ոչ մի արշալույս (45), Իմ վերն թող արև չըխնդա (49), Դուրսը բքաբեր քամին է ոռնում (46), Գարունն էր երգում ձայնով դյուրական (57), Դժկամ նայում են ինձ ժայռերը խոժոռ, Տիտր խաղում են ալիքները ժիր (70), Ջրերն անուշ հեքիաթ են ասում (99), Եվ հեղեղները խոսուն-սառնորակ Ողջունում են ինձ զվարթ ծիծաղելով (88)*, և այլն:

Եվ այսպես մի շարք բայեր, ինչպես *նիրհել, ժպտալ, համբուրել, մեռնել, խոկալ, ասել*, որոնք մարդուն հատուկ գործողություններ են ցույց տալիս, բնության զանազան երևույթներին են վերագրվում և գեղարվեստական պատկերավոր ու հմայիչ խոսք ստեղծում:

Բերված օրինակները միաժամանակ ցույց են տալիս, որ փոխաբերությունների առաջացման, զարգացման ու ամրակայման գործում կարևոր դեր են խաղում նաև տարբեր բառերի հետ միևնույն բառի զանազան կիրառությունները: Այդ հիմքի վրա էլ բառերի սովորական կապակցությունների բովում իրոք ծնունդ են առել շատ ու շատ փոխաբերական իմաստներ: Նկատելի է նաև, որ փոխաբերությունները ոչ թե մեկին, այլ աստիճանաբար, խմորումների ճանապարհով են ստեղծվում և իրենց ընդհանուր զարգացմամբ, տարածվածության աստիճանով, ոճական դերով ու նշանակությամբ, անշուշտ, տարբերվում են իրարից:

Ըստ բնույթի իմաստային զարգացման, տարածվածության աստիճանի, ոճական արժեքի, փոխաբերությունները լինում են երեք տեսակ. ա) պատկերավոր համալեզվային, բ) անհատական-ոճական կամ հեղինակային և գ) «չոր կամ մարած»:

Պատկերավոր համալեզվային են կոչվում այն փոխաբերությունները, որոնք ընդհանուր գործածություն ունեն, ըմբռնելի են հանուրի համար և բառարաններում էլ ներկայացվում են իբրև բառի այլ պատկերավոր իմաստներ. *Հմնտ, ծով և արյան արտասուքի վշտի ծով — մարդկանց, ծով — սրտի, ծով. ծով — աչքեր, ծով — կարոտ, ծով — լռություն, ծով — հարստություն, ծով — մազեր, և այլն. երեխան քնած է և անտառը քնած*

է — աշխարհը քնած է («Քրնած է աշխարհ, քրնած է քամին» ՀԹ, ԵԺ, 1). քաղցր միրգ և քաղցր քուն («Այս, տվեք ինձ քաղցր մի քուն . . . », Հովհ. Հովհաննիսյան) — քաղցր քույր («Քեզ եմ երգում, քաղցր քույր», Ե. Չարենց) — քաղցր հիշատակ («Անցյալի քաղցր հիշատակները չամոքեցին նրա վշտերը», Մուրացան) և այլն: Պայծառ «շատ վառ, լուսաշող» (պայծառ ճառագայթ) և պայծառ «և պայծառ» «հստակ, վճիտ, ջինջ» («Հնչում էր փրփրուն վտակն արծաթի, Արևը խաղում պայծառ կապույտում», ՀԹ, ԵԺ, 1, 53) — պայծառ «հոգով մաքուր անարատ ազնիվ» («Բմ պայծառ, սիրուն, իմ անգին մանկիկ», Ավ. Բս.) — պայծառ «ուրախ, զվարթ, շողշողուն («Աշուն էր, պայծառ աշուն», Ա. Բակունց) — պայծառ «վառվռուն» («Ժամանակը խունացրեց այդ պատմության պայծառ գույները», Ա. Բակունց) — պայծառ «փառավոր, վառ հույսեր ներշնչող» («Ապագայի պայծառ հույսերը լցրել էին նրա սիրտը մի անսահման բերկրությամբ», Բաֆֆի) — պայծառ «պայծառորեն պայծառ կերպով» («Պայծառ վառվում էր միայն մի կարմիր ճրագ», Ա. Բակունց) և այլն:

Նման փոխաբերությունները, սակայն, իրենց ներսում նույնպես ճիշտ միատեսակ չեն. փոխաբերություններ կան, որոնք շատ լայն տարածում ունեն և միտվում են դեպի սովորական բառիմաստները, փոխաբերություններ էլ կան, որոնք խստորեն պահպանում են իրենց այլաբերական իմաստը և, կարծեք ավելի շատ իբրև անհատական իրողություն են ըմբռնվում:

Չոր կամ **մաքած** կոչվում են այն փոխաբերությունները, որոնք հաճախ գործածվելով լեզվում աստիճանաբար մթագնել են իրենց փոխաբերական իմաստով և վերածվել սովորական բառային նշանակության: Նման փոխաբերությունները այդ իսկ պատճառով բառարաններում ոչ թե փոխ . կամ փխբ . (= փոխաբերական) նշումով, այլ իբրև բառերի սովորական իմաստներ են ներկայացվում : Օրինակ **արև**, **արմատ**, **բան**, **բանակ**, **բերան**, **բուր**, **բուժել**, **գագաթ**, **գեղիցիկ**, **գետ**, **գլուխ**, **ելնել**, **երես**, **գործ**, **դաշտ**, **դեմք**, **զվարթ**, **ըմբռնել**, **թև**, **թիկունք**, **ժամանակ**, **իմաստ**, **լեզու**, **լցնել**, **լույս**, **խաղաղ**, **խոր**, **ծալք**, **ծանոթ**, **ձայն**, **ձեռք**, **ճանաչել**, **մաքուր**, **նուրբ**, **ոսկե**, **պոչ**, **ջուր**, **սուր**, **քիթ** և շատ այլ բառերի բազմաթիվ իմաստներ նախապես փոխաբերական-այլբերական են եղել և հետագայում են սովորական իմաստներ դարձել:

Այդպես և, ասենք, **սև** բառի համար բառարանները 20-ից ավել մի մասով սովորական, մի մասով փոխաբերական իմաստներ են նշում, ինչպես **«1. Այն գույնը, որ ունի ածուխը, մուրը: 2. Ընդհանրապես մութ գույնի, թուխ: 3. Մութ, մթամած: 4. Խավար,**

անլույս, խավարամած: 5. Սևամորթ, սև թխագույն մորթ ունեցող: 6. Սև շորեր կրող, սևազգեստ: 7. Սև բանով կեղտոտված» և փոխ. «1. Մոայլ, անուրախ («Բարյավ մնաք, դուք սև օրեր պանդխտության», ՀԹ, ԵԺ, 1, 33): 2. Նեղ, ծանր, դժվար: («Թող մեր սև օրը սա լինի», Ա . Բակունց): 3. Դաժան, վայրագ, անգութ, կատաղի, չար («Օրդուները սև Իրարու ետև Եկա՞ն զարկեցին մեր քարվանն ազնիվ Հայոց լեռներում, Արնոտ լեռներում», ՀԹ, ԵԺ, 1, 144): 4. Չար, չարաբարո, թունոտ («Մարած է սև կիրք, լռել է նախանձ», Հովհ . Հովհաննիսյան) և այլն:

Իմաստային զարգացմամբ, տարածվածության աստիճանով ու նշանակությամբ տարբերվելով իրարից փոխաբերության այդ երեք տեսակները ոչ միայն սահմանազատված չեն, այլև մի ամբողջություն են կազմում, որի մեջ էլ արտացոլված ենք տեսնում նրանց իմաստային կապերն ու հարաբերությունները, աղերսներն ու փոխկապակցությունները, աստիճանիկներն ու աստիճանավորումները: Ընդ որում պետք է ասել, որ անհատական-ոճական կամ հեղինակային փոխաբերությունները բազմիմաստության ստորին, հեղհեղուկ, պատկերավոր համազգեցվային փոխաբերությունները համեմատաբար բարձր ու կայուն, իսկ չոր կամ մարած փոխաբերություններն էլ ամենաբարձր, առավել ընդհանրական աստիճանն են ներկայացնում:

Իսկ սա ցույց է տալիս, որ փոխաբերության միջոցով բազմիմաստության առաջացումն ու ծավալումը իմաստաբանական իսկապես բավական բարդ գործընթաց է , որը և, իհարկե, չի ավարտվում չոր կամ մարած փոխաբերություններով, այլ առաջ գնալով երբեմն նաև բառերի իմաստային շատ ավելի մեծ տարբերություններ է առաջ բերում և հիմք դառնում անգամ տարբեր բառային-բառույթային միավորների համանունների ստեղծման համար:

Եվ իրոք . ժամանակակից Հայոց լեզվի շատ համանուններ հենց նույն բառի տարբեր իմաստներից են ծագում, ինչպես *1. Ակն «աչք», 2. Ակն «ակունք», 3. Ակն «թանկագին քար, գոհար», 4. Ակն «անիվ», 1. Բագուկ «ձեռք, թև, ուսից մինչև դաստակը կամ արմունկից մինչև դաստակը . . .», 2. Բագուկ «ճակնդեղ», 1. Ալիք «ջրի ծփանք, կոհակ», 2. Ալիք «սպիտակ մազեր» (հնց .) 1. Սուր «դաշույն, թուր», 2. Սուր «սրածայր, հատու», 1. Փող «խողովակաձև իր», 2. Փող «երաժշտական գործիք», 3. Փող «վիզ, շնչափող», 4. Փող «փողք» և այլն:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամենին էլ դժվար չէ նկատել, որ միևնույն բառակապակցություններում ու նախադասություններում հաճախ գործածվում են նաև մի շարք փոխաբերություններ, որոնք, բնականաբար, շատ ավելի լայն ու հարուստ իմաստներ են արտահայտում և շատ

ավելի գեղեցիկ ու պատկերավոր դարձնում խոսքը: Նման իրողությունների ուսումնասիրությամբ ու լուսաբանությամբ, սակայն, զբաղվում է գրականագիտությունը, փոխաբերությունը դիտելով բառի ոչ թե իմաստային, այլ գեղարվեստական պատկերավորման արտահայտչական միջոց:

